



ԱՐՄԻՆԵ ՔՅՈԾԿԵՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿԵՆՈՒԹՅԱՆ»
ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Գրիգոր Տաթևացին (1346—1409 թթ.)¹ մշտապես հետաքրքրել է մասնագետներին գրական իր հարուստ ժառանգությամբ, որն ընդգրկում է իմաստասիրական, մեկնողական, աստվածաբանական, արվեստագիտական, մանկավարժական երկասիրություններ²։ Նրա որոշ աշխատություններ, ինչպես, օրինակ, «Գիրք Հարցմանց»-ը,

«Գիրք քարոզության»-ը (երկհատոր), «Ոսկեփորիկ»-ը, «Գիրք Պորփիրի որ կոչի ներածություն»-ը արժանացել են մաս հրատարակության։ Սկզբնաղբյուրները, որոնցում Տաթևացու գրական վաստակը հաճախ ներկայացված է գրեթե ամբողջությամբ, հեղինակի մեկնաբանական աշխատությունների խմբում հիշում են Դավթի սաղմոսների ծավալում մի մեկնություն՝ գրված 1405 թ.։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում մեզ հանդիպեց Տաթևացու գրչին պատկանող Սաղմոսաց մեկնության մի նոր բնագիր, որը տարբերվում է մինչև այժմ հայտնի օրինակից ու գրված է շատ ավելի վաղ։ Հայտնաբերված տարբերակը բացի այն, որ հարստացնում է հեղինակի գրական ժառանգությունը մի նոր երկով, միաժամանակ ուշադրություն է գրավում իր շարադրանքով և նպատակային ուղղվածությամբ։ Ներկա հոդվածով ներկայացնում ենք հիշյալ բնագրի մասին մեր դիտարկումները։

¹ Ոմանց կարծիքով Գրիգոր Տաթևացին պիտի ծնված լինի 1340 թ. (տե՛ս Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 170)։ Կա մահ ենթադրություն, որ մահ ծնվել է ոչ թե Վաղոց ձորում (Սյունիք), այլ Վրաստանի Թմոք (Թմոզվի) բերդավանում (տե՛ս Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 193։ Նաև՝ «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 103)։ Ինչ վերաբերում է Տաթևացու մահվան թվականին, ապա որոշ աղբյուրներում ալն ոչ թե 1409 է, այլ 1410։ Լ. Խաչիկյանը, տոմարական իր կատարած հաշվարկով, ի չիք է դարձնում այդ անհամապատասխանությունը (տե՛ս «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 101—103)։

² Գրիգոր Տաթևացու և նրա մատենագրական ժառանգության մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Շ. Շ. Արշաթյան, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, с. 175—176. Մահ՝ Գ. Գրիգորյան, նշված աշխ., և այլուր։

Դեռևս հայ գրավոր դպրության արշալույսին, երբ ուսումնալիրական կենտրոններում իրար ետևից լույս աշխարհ էին գալիս թարգմանական և ինքնուրույն բազմաբնույթ երկասիրություններ, ի թիվս պատմագրական, ճարտասանական, քերա-

կանական և կրոնա-եկեղեցական աշխարհային աշխատությունների, գրվում էին մաս մեկ-նություններ: Գրական ստեղծագործությունների էությունը բացահայտելու, դրանք աչքաբանորեն բացատրելու մասն եղանակ, դեռ մինչև քրիստոնեության ընդունումը, կիրառում էին հույները: Քրիստոնեությունը ավելի հրամայական դարձրեց այդ պահանջը. ստեղծվեց մեկնաբանական հարուստ գրականություն, որի առանցքը, բնականաբար, հանդիսացավ Աստվածաշունչը: Վերջինս, որպես նոր կրոնի հիմնաքար, իր նպատակին կարող էր ծառայել, եթե մատուցվեր պարզ ու հասկանալի լեզվով: Պատահական չէ, որ մեր անդրանիկ մատենագիրներ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Եզնիկ Կողբացին և ուրիշներ ձեռնամուխ եղան այդ գործին: Աստվածաշունչի առանձին բաժիններ, դրանց թվում և Սաղմոսարանը, որը Հիմնականարանի ամենից շատ կարդացվող ու սիրված գիրքն էր, այս առումով սկզբից ևեթ արժանացան հատուկ ուշադրության: Սաղմոսների վաղագույն մեկնությունները, որոնք Դ դարից են, կապվում են Աթանաս Աղեքսանդրացու, Եպիփան Կիպրացու, Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու և այլոց անունների հետ: Մեզանում առաջինը Ներսես Լամբրոնացին էր (ԺԲ դ.), որ հանգամանալից քննության արժանացրեց Դավթի բոլոր 150 սաղմոսները³: Նրանից հետո ծավալուն մեկնություններով հանդես եկան Վարդան Արևելցին (ԺԳ դ.), Գրիգոր Տաթևացին⁴: Ավելի ուշ, Սաղմոսների մանրակրկիտ վերլուծություն ու մեկնություն է կատարել Միք. Չամչյանը (ԺԸ

դ.). նրա այդ հիանալի աշխատությունը կազմում է 10 սովոր հատոր⁵:

Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնության» նոր տարբերակը, որն ունի **Եպիփան ի վերայ Սաղմոսին՝ Ոչ չարիցեն ամբարիշտը...** սկսվածքը, պահպանված է սակավ օրինակներով: Այն գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ վեց գրչագրերում՝ № 1126 (ԺԵ դ., թերթ 4ա—65բ), № 1130 (ԺԵ դ., թերթ 147ա—195բ, 250ա—256բ), № 1131 (ԺԵ դ., թերթ 64ա—94ա), № 2642 (1663 թ., թերթ 258ա—557ա), № 4370 (ԺԶ դ., թերթ 69ա—118բ), № 6995 (ԺԶ—ԺԷ դդ., թերթ 1ա—143ա)⁶: Մի օրինակ գտնվում է Երուսաղեմի Պատրիարքարանի № 1530 ձեռագրում, որի գրության վայրն ու ժամանակը հայտնի չեն⁷: Համեմատությունը բնագրային էական տարբերություններ չի ցուցաբերում, եթե նկատի չունենանք կատարված միջամտությունները և որոշ գույքների կառուցվածքային փոփոխությունները: Ընդօրինակություններից ոչ մեկը, առանձին վերցրած, բնագրի նախնական ու ճշգրիտ պատկերը չի տալիս. համեմատաբար անաղարտ է № 1131 ձեռագրում գտնվողը, որը մեր դիտարկումների համար ունեցել է երակետային նշանակություն: Գրչագիրը, որ բաղկացած է 213 թերթից, ԺԵ դարի ժողովածու է: Ձեռագրի գրչի՝ Ծահիկի մեկ տողից կազմված հիշատակարանը չի տալիս ո՛չ գրության թվականը, ո՛չ էլ վայրը: Մեզ հետաքրքրող նյութը զբաղեցնում է 64ա—94ա թերթերը. գրված է խիտ ու մանր բոլորգրով և հապավումներով: Բնա-

³ Դավթի Ամհադթին ևս վերագրվում է Սաղմոսաց մեկնություն, բայց դա խիստ համատու է, հատվածային:

⁴ Ձեռագիր աղբյուրներում Սաղմոսաց մեկնիչների մասին պահպանված է հետևյալ վկայությունը. «Վասն Սաղմոսին թե ով ոք մեկնեաց. եւ մեկնեցաւ ի ձեռն Ժ արանց արքազանցից. և է նախ և առաջին՝ Եփրեմ խորին Ասորին. ք) Եպիփան Կիպրացին. գ) Աթանաս հայրապետն. դ) Դանիել. ե) Կիսրեղ Աղեքսանդրացին. զ) Ներսէս Լամբրոնացին. է) Եսայի վարդապետն. ը) Դավթի Ամխադթի փիլիսոփայն. թ) Ստեփաննոս. ժ) Մեծն Վարդան Հաղբատացին, որ ժողովեաց զամենայն բանս մեկնողացն և եղ ի կարգի մի ըստ միջոէ, զանկողնոն և հան և զթերին ելից և ինքն մեկնեաց, և զիրաքանչիւր ատղի անունն ի գլոխ բանին իրոյ գրեալ է» (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ LIX):

⁵ Միք. Չամչյան, Մեկնություն Սաղմոսաց, Ա.—Ժ, Վենետիկ, 1815—1823: Աշխատության առաջին հատորի առաջաբանում, ուր հեղինակը անդրադառնում է մինչև այդ եղած մեկնություններին, հայ մեկնիչներից հիշված են միայն Ներսես Լամբրոնացին և Վարդան Արևելցին: Տաթևացու անվան շրջանումը, որն առաջին հայացքից տարօրինակ է բովում, տվյալ դեպքում պիտի բացատրվի Տաթևացու աշխարհայացքի ու մանավանդ նրա խնդրոտարկա մեկնության հակակաթոլիկական էությանը:

⁶ Հիշյալ ձեռագրերի շնամբ տե՛ս «Շուրջակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Ջեյրումյան, Փ. Ամբարյան, Երևան, Ա, 1965, էջ 481—483, 844, 1200. Բ, 1970, էջ 437—438:

⁷ Ձեռագիրը մեզ մատչելի չի եղել, տվյալները վերցրել ենք համապատասխան ձեռագրացուցակից (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբ-Լանց», հատոր Ե, կազմեց՝ Ն. Կար. Պողարյան, Երուսաղեմ, 1971, էջ 282):

գիրն ամբողջական է և ունի հետևյալ խորագիրը, որն անհշան տարբերություններով կրկնվում է նաև մյուս օրինակներում:

Նորին Գրիգորի, աշակերտի եռամեծի[ն] Յոհաննու Որոտնեցո[յ], արարեալ քաաքում[ն] բանից ի մեկնութենէ Սաղմոսին աստուածահարն Դարթի մարգարէին, ընդդէմ մոլ[որ]ութեան նոցա որք ասեն Բի[ւ]րքաթոր. կազդուրեալ զգլորեալ:

Ինչպես տեսնում ենք, այստեղ պահպանված է հեղինակի՝ Գրիգոր Տաթևացու անունը և միաժամանակ մատնանշված Մեկնության հետապնդած նպատակը, այն է՝ պայքար ընդդէմ նրանց, ովքեր ընդունում են «Բիրքաթոր»-ը: Այս բառը, որ լատիներեն *purgatorium*-ի հայերեն տառադարձումն է, նշանակում է **Քավարան**: Կաթոլիկ եկեղեցին, ի տարբերություն հայ ուղղափառների, դրախտից ու դժոխքից բացի ընդունում է նաև քավարանի գոյությունը: Խնդրո առարկա աշխատության խորագրում քավարանի մասին եղած ակնարկը միանգամայն հասկանալի է, եթե նկատի ունենանք Հայ եկեղեցու անկախությանն սպառնացող վտանգը Տաթևացու ասարած ժամանակաշրջանում: Գաղտնիք չէ, որ Գրիգոր Տաթևացին անողորք պայքար է մղել կաթոլիկ գաղափարախոսության դեմ, որը ԺԳ—ԺԴ դարերում Հայաստանում քավական լայն տարածում էր գտել: Հոռոմի Դապի կողմից ուղարկված Բարթողիմեոս Մարաղացու և այլ քարոզիչների ջանքերով ԺԴ դ. սկզբում առաջ էր եկել լատին եկեղեցու հետ միանալու մի շարժում, որը հայտնի դարձավ «միարարություն» («ունիթոություն») անունով: Այդ շարժումը, որը գլխավորում էր Հովհաննես Բոնեցին, ընդգրկում էր հիմնականում Արտազը, Նախիջևանն ու Երրնջակը և ավելի մեծ տարածում էր գտել Կիլիկիայում¹⁰:

¹⁰ № 4370 ձեռագրի օրինակն անխորագիր է, որովհետև բնագիրն սկզբից պակասավոր է:

⁹ Ուղիղ փակագծերով բերված լրացումները կատարված են մյուս օրինակների վերնագրերի միմյան վրա: Կազդուրեալ զգլորեալ խառնուրդ ասկա են միայն № 1181 ձեռագրում:

¹⁰ «Բիրքաթոր» բառի գրության մեջ տեսնում ենք պայքարական բաղաձայնների համակարգի այն երևույթը, երբ ձայնեղ բաղաձայնները վերածվում են շնչեղ խաղերի (պ > բ, գ > ք) մի բան, որ միջյալ ժամանակաշրջանում նկատվում էր կիլիկյան հայերենում: Բնական է ուրեմն մտածել, որ բառն աղայիսի գրությամբ Կիլիկիայից է ներթափանցել բուն Հայաստան, միարարական գրականության միջոցով (կեղվարանական այս երևույթը մեզ բացա-

Գաղափարական ճակատում առաջացած այս ճեղքվածքը, որն աստիճանաբար խորանալով վտանգում էր նաև ազգային մեր ինքնությունությունը, բնականաբար պետք է մտահոգեր ժողովրդի ճակատագրով անհանգստացած եկեղեցական ու աշխարհիկ շատ գործիչների: Եվ, ինչպես պետք էր սպասել, օտարամոլ այդ հոսանքի դեմ վճռական մարտի դուրս եկան Հայ Սուրբ-լական եկեղեցու ներկայացուցիչները, որոնց մեջ, Եսայի Նչեցուց հետո, առաջատար դերը պատկանում է Հովհան Որոտնեցուն և նրա աշակերտ Գրիգոր Տաթևացուն: Սրանց գործունեության վայրը՝ Սյունիքը, դարձել էր միարարների պատակտիչ արարմունքների թիրախը: Միշտ ըմբռնելով այդ «մոլորության» հասարակական-քաղաքական էությունը, Որոտնեցին իր աշակերտների հետ սկսեց անգիշտ մի պայքար, որը նրա մահից հետո մույնպիսի վճռականությամբ ու հետևողականությամբ շարունակեց Գրիգոր Տաթևացին: Որոտնեցու, առավել ևս Տաթևացու մատենագրական ժառանգությունն ամբողջությամբ տոգորված է անհաշտ պայքարի ոգով: Անուրանալի է, որ հենց նրանց ջանքերով ապահովվեց Հայ եկեղեցու, հետևապես և հայ ժողովրդի ինքնությունը գոյությունը, մինչդեռ Արտազի, Նախիջևանի, Երնջակի այն հայերը, որոնք տուրք էին տվել կաթոլիկ տրամադրություններին, ի վերջո դարձան մահմեդական և կորցրին իրենց ազգային դեմքը¹¹:

Իր գրական գործունեությունը Գրիգոր Տաթևացին սկսել է որպես գրիչ: Այդ ենվկայում 1371—1386 թթ. ընթացքում նրա ընդօրինակած ձեռագրերը¹²: Տակավին այդ ժամանակ, որպես ուղղափառության ջերմ պաշտպան, նա ի հայտ է բերում հակաքաղկեդոնական, հակակաթոլիկական տրամադրություն, հատկանիշ, որով աչքի են ընկել Տաթևի դպրոցի նաև մյուս սաները: Նրանք թարգմանում, ընդօրինակում, մեկնաբանում էին ոչ միայն ուղղափառական հեղինակների, այլև նրանց հակառակորդների երկափրությունները, վերջիններիս նկատմամբ անհանդուրժողությունը դարձնելով առավել դիպուկ ու

տրեղ է բանասիրական գիտությունների թեկնածու Մարո Մորադյանը):

¹¹ Լ. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», № 11, Երևան, 1978, էջ 167:

¹² Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի միջատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 497, 498, 507, 529, 564:

նպատակահին: Ահա թե ինչու Տաթևացու ընդօրինակած գրչագրերի խմբում տեղ են գտել և՛ Կյուրեղ Աղեքսանդրացու, և՛ լատին կրոնավորներ Ֆրա Բարթողիմեոսի ու Պետրոս Արագունացու գործերը: Կյուրեղ Աղեքսանդրացու. «Գիրք Պարսպմանց» աշխատության իր բերած հիշատակարանում գրիչ-Տաթևացին խոսում է այն բացահայտ պայքարի մասին, որ մղում էին Որոտնեցին ու նրա աշակերտները գաղափարական թշնամու դեմ. «Ջոր այսու յուսով տարփագող եղեալ սորին ուղղութեան... յեղակարծ ժամու գտեալ եղև ի յարկեղս գրոց յեկեղեցուչ առաքելական աթոռոյն **Տաթևու**, յորում ժամանակի էր կրկին ընծիւղեալ դառն և դաժան երկաբնակ ադանդն Քաղկեդոնի ի կոչեցեալ գեղոյն **Քոնա**, շրջաբնակ գաւառոք: Եւ մեք... առեալ իրաքանչիւր ոք օրինակեցաք՝ ի վարժումն ուղղաւեր մտաց: Որոց և ես, ըստ իմով կարիի, տխեղծ մատամք գծագրեցի զսա առ ոռս մեծի վարժապետին իմոյ **Յոհաննու Որոտնեցու**...»: Եւ ապա առեալ ընթացաք ի վերոյ ասացեալ գաւառն, և պարսաքարեալ սովառ հարաք գհայհոյիչն ճակատ. և ցրուեցաւ փաղանկն աղթարմայութեան, և բազում վանորայս առեալ ի մոցանէ եղև ուրախութիւն ուղղափառաց դասոց ամս բազումս (ընդգծումը մերն է—Ա. Բ.): Յորում և էր թիւ շրջագայութեան տօմարիս մեծի Պ և ԻԸ (1379) ամի...»¹³:

Անհանդուրժողության մույն ոգին է իշխում Գրիգոր Տաթևացու գրեթե բոլոր աշխատություններում, դրանց թվում և Սաղմոսաց նորահայտ մեկնության մեջ: Վերջինս ունի ուշագրավ մի հիշատակարան, որը պահպանված է երեք ձեռագրերում¹⁴: Դրա շնորհիվ ոչ միայն հավաստվում է, որ իրոք Տաթևացին է տվյալ աշխատության հեղինակը, այլև պարզվում մեկնության գրության թվականը: Բերում ենք այդ հիշատակարանի 1181 ձեռագրում գտնվող օրինակն ամբողջությամբ:

«Ուստի և այս տուչութիւն մեկնութեան Սաղմոսիս ըստ նախատեսութեան մարգարէին Էսայ[ե]այ դիցի, իբր զկրկին լոմայս աղքատի ի գանձարան ճոխութեան մանկանց Սիոնի վերնոյն արկցի: Իսկ թե գտաւ ի սմա ինչ արժանի, Տեառն շնորհ մատուցի // (94բ) և պակասն մերոյ[ս] փոքրընկալ անաթոյն երեսցի, որ և յեղբայրական սիրոյ թերին 199ի և աւելին

կշռեսցի. և ուղղեալքն հաւասարութեամբ աղաչեմ նշխար ձերոյդ մաղթանաց՝ ողորմութիւն մեզ պարգևեսցի, թերևս բուժեսցի շարաւ նեխեալ և փտեալ վիրաւոր մարմնոյս, և սրբեսցի խիղճ վտանկաւոր ոգոյս: Ընդ որս և երիցս երջանիկ վարժապետին իմոյ **Յոհաննու Որոտնեցու** յիշատակութեամբ եղիցի, որ նախ երից ամաց փոխեցաւ առ ցանկալին իր Քրիստոս. և զմեզ որք թողեալ կամք տարակուսեալ ի մէջ յոգնաթիւ չարաց բազմապտոյտ ալեաց աստիս կոհակաց, անփորձելի [և] անհմուտ նաւաստի, որ և ոչ սակաւ մխիթարութիւն վարկայ գհաւաքումն սորա, որոյ չափ և տրտմեցալ որքան և լետոյ զարթեալ: Եւ այս ի պատճառէ մեր[ս] պղերգութեանց կամ ի ծոյլ աշակերտաց, կամ ժամանակիս դառնութեանց, յորում ասպատակեալ հեռզ զօրաց կրկին Խորազմ անուանեալ ազանց, կործանեցին զերկիրս Հայաստանեալ[ի]ց, զՎրաց, զՊարսից և զայ[լ]ս բազմաց. զոմանս ի սուր արկին և ի հուր. զկէսք գերի վարեցին և մնացեալքն ի սովոյ ջնջեցան. և բազում շէնք աւերեցան: Յորում ամի էր թիւն Հայոց ՊԼԶ (1387), և մեք մագապոր աստանդեալ շրջեաք ի վերայ երկրի ի նուազ բարեաց և խաղաղութեանց: Եւ դադարեալ սուղ ինչ ատուրք, լապահովեցաք ի վանս հրեշտակաբնակ առաքելական աթոռոյս **Եւստաթէի**, որ և աւարտեալ գրեցաք ի սմա: Այլ և աղաչեմք զաստուածաւոր պատահողս, որք ընդօնակէք ի սմանէ, գրեսցիք և զսակաւ յիշտակս զայս, զի և դուք գրեալ լիջիք ի դպրութեան կենաց, ամէն»:

Սույն հիշատակարանի № 4370 ձեռագրի օրինակը «որ և աւարտեալ գրեցաք ի սմա...» խոսքերից հետո ունի ձեռամբ **Գրիգոր Ջուղայեցի** բառերը, իսկ № 6995 ձեռագրում, այդ մույն տեղում կարդում ենք՝ ձեռամբ **Մատթէոս գրչի և աշակերտի**: Վերջինս, անտարակույս, Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթէոս Ջուղայեցին է. ինչ վերաբերում է Գրիգոր Ջուղայեցուն, ապա աղբյուրներում նա ևս հիշվում է որպէս Տաթևացու աշակերտ¹⁵: Հեղինակալին հիշատակարանում հանդես եկող այս անձնավորությունները առաջին հայացքից կարող են ընկալվել իբրև աշխատության հեղինակ, բայց նման ենթադրությունը բացառվում է նախ այն պատճառով, որ **միևնույն** հիշատակարանի **միևնույն** տեղում հիշված են երկու տարբեր

¹³ Նույն տեղում, էջ 529—530:

¹⁴ Ձեռ. № 1181 (94աբ), № 4370 (118բ—119ա), № 6995 (143ա—144ա):

¹⁵ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 606:

անուններ. բացի այդ, և՛ Գրիգորը, և՛ Մատթեոսը աշակերտել են ոչ թե Հովհան Որոտնեցուն, այլ Գրիգոր Տաթևացուն, իսկ հիշատակարանում պարզ գրած է. «...և երիցս երջանիկ վարժապետին իմոյ Յոհաննու Որոտնեցոյ...»: Եվ, վերջապես, մեզ համար հիմք հանդիսացող № 1131 ձեռագրի օրինակում այդ հատվածում ոչ մի անուն չի բերված: Հավանաբար հիշյալ Գրիգորն ու Մատթեոսը Տաթևացու այն աշակերտ-գրիչներն էին, որոնք ընդօրինակել ու թերևս որոշ իմաստով սրբագրել են իրենց ուսուցչի գործը (ինչպես ցույց է տալիս որոշ հատվածների համեմատությունը) ու այդ պատճառով իրավունք վերապահել իրենց անունը ներմուծելու հեղինակի հիշատակարանում:

Ինչպես ասվեց, հիշատակարանը բովանդակում է տվյալներ, որոնք օգնում են պարզելու մեկնության գրության ժամանակը և վայրը: Ապրելով Լեռն Թեմուրի ասպատակությունների դարաշրջանում, Տաթևացին իր հիշատակարաններում հաճախ մեծ տեղ է հատկացրել քաղաքական իրադարձությունների նկարագրությանը: Այս մեկում խոսք է լինում 1287 թ. արշավանքի մասին: Հեղինակը պատկերում է թշնամու վայրագությունները, սովն ու գերելարությունը և երկրում տիրող անապահով կացությունը, որի պատճառով ինքն ու աշակերտները առժամյա հանգրվան են գտնում Տաթևում. «...և մեք մագապոր աստանդեալ շրջեաք ի վերայ երկրի ի նուազ բարեաց և խաղաղութեանց. և դադարեալ սող ինչ ատորք, յապահովեցաք ի վանս հրեշտակաբնակ առաքելական արքողոյս Եստաթեի, ուր և աւարտեալ գրեցաք ի սմա...»: Տաթևի վանքում ապաստանելու այդ կարճատև ժամանակամիջոցը, ամենայն հավանականությամբ, ընդգրկել է 1388—1391 թվականները¹⁶, որի ընթացքում էլ պիտի շարադրված լինի սույն աշխատությունը: Վերջինիս գրության առավել ճշգրիտ թվականը մեզ տալիս է հիշատակարանի հետևյալ հատվածը. «...Յոհաննու Որոտնեցոյ յիշատակութեամբ եղիցի, որ նախ երից ամաց փոխեցաւ (ընդգծումը մերն է—Ա. Բ.) առ ցանկալին իւր Քրիստոս...»: Որոտնեցու մահվան թվականը սովորաբար ընդունվել է 1386-ը, իսկ

ըստ ոմանց՝ 1388-ը¹⁷: Առավել արժանահավատ սկզբնաղբյուր պիտի համարել Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից»-ը, ուր քերված թվականը 1386-ի հունվարի 6-ն է, արևի խալարման ժամանակ:

«Ի յութհարիւր Հայոց թուական Ընդ որ և հինգ եօթն յաւելան (1386) Յունարի մին պահք Յայտնութեան Լոյս արևուն խաւարեցան: Մեծ վարդապետն անուն Յոհան, Որ և Կախիկ անուն ծնընդեան Յեա վեց ատուրըն խաւարման՝ Փոխի առ Տէր իւր անծկական...»¹⁸:

Իրողությունն այն է, որ 1386 թ. այդ նույն ժամանակամիջոցում իսկապես տեղի է ունեցել արևի խալարում, ուստի մեկընդմիջտ բացառվում է այլ թվականի ենթադրությունը: Այսպիսով, Որոտնեցու մահից երեք տարի անց՝ 1389 թ., Տաթևացին ավարտել է Սաղմոսաց իր այս մեկնությունը, Տաթևի վանքում:

Այժմ տեսնենք, թե կառուցվածքային ու բնագրային ի՞նչ առանձնահատկություններ են հատկանշում Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնության» նորահայտ տարբերակը: Ի տարբերություն նմանատիպ այլ մեկնությունների, ուր բոլոր սաղմոսները քննարկվում են մի առ մի, մեզ հետաքրքրող բնագիրը Սաղմոսարանի ծաղկաբաղ է, ծավալով ոչ մեծ: Ձեռագրերից երեքում այն սկսվում է նյութերի ցանկով, որն ունի Այս ինչ է ի սմայ խորագիրը և Ա.—ՂԹ թվահամարների տակ ներկայացնում է աշխատության 99 ենթագլուխները¹⁹: Գլխա-

¹⁷ Տե՛ս Գ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980, էջ 5—6:

¹⁸ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 272:

¹⁹ Նյութերի ցանկ ունեն № 1126, № 1130 և № 6995 ձեռագրերում գտնվող օրինակներում: № 4370 ձեռագրի օրինակը սկզբից թերի է, իսկ մյուս երկուսում (№ 1131 և № 2642) նյութերի ցանկ չկա, բայց բնագրում ենթագլուխներն առանձնանում են իրենց կարմիր խորագրերով ու կից լուսանցքում գտնվող թվահամարով: Օրինակների համեմատությունը բացահայտում է գլխաբաժանումների որոշ անհամապատասխանություններ: Նյութերի հաջորդականության, և՛ դրանց քանակի առումով: Օրինակ, № 1130 ձեռագրում սկզբի ցանկը ներկայացնում է Ա.—ՂԵ թվահամարները, իսկ ենթագլուխների ընդհանուր թիվը 97 է: Բաճն այն է, որ խԲ և խԳ թվահամարները սխալմամբ կրկնված են, իսկ ԼԵ և ՀԸ ենթագլուխները առանձին բա-

¹⁶ Այդպես ենք կարծում, որովհետև 1387 թ. Տաթևացին գտնվում էր Ծախապոնք ամրոցում, իսկ 1391 թ.՝ Ապրակունյաց վանքում (Երևզյակ): Մի քանի տարի անց, 1395 թ., նրան կրկին տեսնում ենք Տաթևում (տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 567—569, 592, 613):

բաժանումը կատարված է ըստ սաղմոսների, որոնք ընտրված են քաղվածաբար, հիմնականում պահպանելով ըստ համարների իրենց ունեցած հաջորդականությունը: Ողոջ սաղմոսների հատկացված են մեկից ավելի ենթաբաժիններ, ընդ որում, խորագրերը մերթ համապատասխան սաղմոսից նույնությամբ քաղված հատածներ են, մերթ (հատկապես նյութերի ցանկում) տվյալ գլխի բովանդակությունը բացահայտող խոսքեր²⁰:

Ինչպես իր տեղում ապկեց, Մեկնության օրինակների համեմատությունը բնագրային լուրջ տարբերություններ չի ցուցաբերում: աշնամեմայնիլ, կան անհամապատասխանություններ, որոնք անհնար է շրջանցել: Խոսքը այն խոտորումների մասին է, որոնք, մեր կարծիքով, կարող են լինել հետագայի հավելումներ կամ արդյունք՝ խմբագրական միջամտության²¹: Այս իմաստով հետաքրքրական պատկեր է ներկայացնում ԺԳ գլուխը, որն ունի **Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հաներ զմեզ ի հանգիստ**²² խորագիրը ու **Նախ ի հրոյ և ի ջրոյ ստեղծուած ենք...** սկսվածքը: հետևում է 10 կետերից բաղկացած սեղմ ու ամփոփ շարադրանքը, ուր մեկնում է խորագիրը՝ զանազան առումներով: Նույն նյութը, գրչական չնչին տարբերություններով, առկա է բոլոր օրինակներում: Ձեռագրական անհամապատասխանություններն ի հայտ են գալիս շարունակության մեջ, առաջ բերելով շփոթ ու երկընտրանք: Այսպես, օրինակ, ձեռագրերից չորսում (№ 1126, 2642, 4370 և 6995) վերոհիշյալ հատվածին հաջորդում է ծավալուն մի բաժին՝ **Նախերգան** խորագրով և **Չաստուածային անեղ բնութիւն...** սկսվածքով, ուր մանրամասն մեկնվում է գլխի սկզբում

բերված 10 կետերից յուրաքանչյուրն առանձին-առանձին²³: Օրգանական կապն, այսպիսով, ակներև է: Հարց է ծագում. հիշյալ բաժինը հեղինակային ինքնագրում արդյո՞ք եղել է: Բանն այն է, որ նյութը բովանդակող գրչագրերը համեմատաբար ուշ շրջանի՝ ԺԶ—ԺԷ դդ. ընդօրինակություններ են, հանգամանք, որը թելադրում է մտածել, թե տվյալ դեպքում հնարավոր է մտածել խմբագրական միջամտության մասին՝ կատարված, թերևս, ոչ թե անձամբ Տաթևացու, այլ նրա աշակերտների ձեռքով: Բայց հետաքրքրական է և այն, որ հեղինակի «Սաղմոսաց մեկնության» 1405 թ. գրած տարբերակում նյութն ամբողջությամբ առկա է, միայն թե հանդես է գալիս իբրև **քարոզ**: Մեր կարծիքով, առավել հավանական է, որ հիշյալ մասը նույնպես Տաթևացու շարադրածը լինի, բայց ոչ հենց այն ժամանակ, երբ գրվել է Մեկնության նախնական օրինակը, այլ ավելի ուշ, երբ հեղինակը, դրված տվյալ պարբերության մասին եղած թյուր բացատրությունը ժխտելու անհրաժեշտությունից, կրկին անդրադառնում է այդ հարցին՝ առավել ընդարձակ մեկնաբանությամբ: Ահա թե ինչ է գրում նա ԿԵ սաղմոսի հիշյալ հատվածի կապակցությամբ «Սաղմոսաց մեկնության» 1405 թ. տարբերակում. «Աստ ոմանք գժաւարանն ասեն: Պատասխանենք ի կարճոյ թէ՛ ոչ: Նախ՝ զի Քաւարանն հուր է ըստ մոցա, իսկ աստ հուր և ջուր ասէ. երկրորդ՝ զի նախ զհուր և ապա զջուր ընդդէմ մոցա ասէ: Եւ զայլ պատաս-

ծիններով չեն ներկայացված: Ենթադրյալների համարակալման մասնակի խախտումներ ու բացթողումներ նկատվում են բնագրի մասն մյուս օրինակներում:

²⁰ Օրինակ, բնագրի երկրորդ ենթագլուխը № 1131 և № 2642 ձեռագրերում խորագրված է՝ **Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում**, իսկ № 1126, № 1130 և № 6995 ձեռագրերում՝ **Առաւատ կոչի Քրիստոս**:

²¹ Օրինակներն ունեն մասն բնագրական ընդհանրություններ, հատկապես № 2642 ու № 1126 ձեռագրերում գտնվողները (սրանց հարում է, մասամբ, № 4370 ձեռագրի օրինակը), սակայն միաժամանակ կան այնպիսի տարբերություններ, որոնք բացառում են այդ օրինակների միմյանցից ընդօրինակված լինելը:

²² Սաղմոս ԿԵ, 12:

²³ № 6995 ձեռագրում, ուր թերթերի դասավորությունը շատ տեղերում խախտված է, **Նախերգան**-ը անմիջապես հաջորդում է **Անցաք մեք ընդ հուր...** խորագրին, իսկ **Նախ ի հրոյ և ի ջրոյ ստեղծուած ենք...** սկսվածքով հատվածը գտնվում է վերջում, միջանկյալ մի այլ նյութից հետո (որն զբաղեցնում է 27ա—31ա թերթերը և ունի **Որպէս ասեն փիլիսոփոսք...** սկիզբը): № 4370 ձեռագրում **Նախերգան**-ին նախորդում է պահքի, աղոթքի, հարեցողության վերաբերյալ երկու թերթ զբաղեցնող շարադրանք, որի լույս առաչին մասը (**Վասն Պահոց** խորագրով) առկա է նաև № 2642 և № 1126 ձեռագրերում, դարձյալ նույն տեղում: Այդ նյութը, շատ ավելի ընդարձակ ու մասն այլ ենթախորագրերով, կա № 1131 ձեռագրում, բայց անկախ «Սաղմոսաց մեկնության» բնագրից, գրչագրի 179ա—186ա թերթերում: Նյութն իր բովանդակությամբ անհարիր ու խորթ չէ **Անցաք մեք ընդ հուր...** խորագրով գլխին, այնուամենայնիվ, մեր կարծիքով, օրգանապես չի կապվում Մեկնության նախնական օրինակի հետ:

խանին գտնես ի Հարցմունքն, Ժ հատորն, ԺԵ համարն»²⁴:

Բնագրային առումով ուշադրություն է գրավում նաև Վասն այսորիկ ամ գքեզ Աստուած, Աստուած քո քան զընկերս խորագրով հանդես եկող և Լոյս ի լուսոյ ասեն գրանն Աստուծոյ... սկսվածքով նյութը²⁵: Վերջինս առկա է միայն № 1131 ձեռագրում. ծավալով բավական ընդարձակ է, գրադեցումն է 65ա—68ա թերթերը. ներկայացնում է Մեկնության Զ և է գլուխների արանքում ու իր հերթին համարակալված է իբրև է գլուխ: Ծարադրանքը, որն ունի դավանաբանական բնույթ, կոչված է հերթելու Քրիստոսի մարդկության քաղկեդոնական ուսմունքը և հիմնավորելու հայ ուղղափառ եկեղեցու տեսությունը: Գլուխն ամբողջությամբ վերցրած միասնական է, թեև ըստ էության կազմված է երկու մասից: Առաջին՝ առավել ընդարձակ քաժինը գուտ դավանաբանություն է, ուր քննարկվում է Քրիստոսի աստվածային ու մարդկային բնության հարցը: Երկրորդ մասը, ծավալով շատ ավելի փոքր ու սեղմ, նվիրված է քահանայական կարգին, ընդ որում, ներկայացված է ոչ միայն հայ ուղղափառ եկեղեցու ընդունած աստիճանավորումը, այլև հույների ու լատինների համապատասխան կարգը: Ավելորդ է ասել, որ այս գլխում ևս հեղինակը հավատարիմ է մնացել ուղղադավանությունը պաշտպանելու իր սկզբունքին: Իսկ ինչպե՞ս է այն առնչվում Մեկնության բնագրի նախօրինակին. 1405 թ. Մեկնության մեջ այդ ծավալուն քաժինը չափազանց սեղմ է և ուղեկցված այսպիսի նշումով՝ «ասացաւ այլ ուրեք ի սոյն բան ի մեկնութիւնս»²⁶: Ուրեմն, տարակույս լինել չի կարող, որ շարադրանքը անձամբ Տաթևացունն է, բաց

արդյո՞ք Մեկնության սկզբնական տարբերակում ընդգրկված էր, թե՞ հետագայում է ներմուծվել: Այս հարցում ունենք որոշ վերապահություն, քանի որ նյութը պահպանված է միայն մեկ ձեռագրում և իր համարակալումով չի առանձնանում²⁷:

Այսպիսին է Սաղմոսաց նորահայտ Մեկնության մոտավոր պատկերը: Գրության իր ժամանակով այն կապվում է Տաթևացու գրական գործունեության վաղ շրջանի հետ և հետաքրքրական է, որ դրանում արդեն առկա են հեղինակի առաջ քաշած հիմնական դրույթները, հատկապես հակաքաղկեդոնական-հակակաթոլիկական թեզերը, որոնց առավել մշակված ու ցայտուն դրսևորումը տեսնում ենք նրա հետագա ստեղծագործություններում: Օրինակ, վերելում հիշված է ենթագլխի որոշ հատվածներ կարող են համեմատվել «Գիրք Հարցմանց»-ի (1397 թ.) համապատասխան նյութի հետ մերթ իբրև տառացի կրկնություն, իսկ ավելի հաճախ սոսկ ընդհանուր նմանությամբ²⁸. Իսկ միևնույն գլխի այն մասը, ուր խոսվում է օծման մասին, մասամբ նման է «Ոսկեփորիկ»-ի (1409 թ.) Վասն օծման խորագրով հանդես եկող նյութին²⁹: Կարելի է մատնացույց անել այսպիսի և այլ զուգահեռներ: Մեզ համար, սակայն, առավել հետաքրքրական է Սաղմոսաց նորահայտ մեկնության առնչությունը հեղինակի 1405 թ. գրած մեկնության բնագրին, որին և կանդորադառնանք այժմ:

(Ծարունակելի)

²⁷ Նկատի ունենալով նյութի շահեկանությունը, հողվածին կից ներկայացնում ենք հիշյալ ենթագլխի բնագիրը:

²⁸ Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 80—82, 474—475, 606—608:

²⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 169—177:

²⁴ Ձեռ. № 1020, թերթ 177ա:

²⁵ Սաղմոս ԽԴ, 8: Տե՛ս նաև՝ Երր. Ա, 9:

²⁶ Ձեռ. № 1020, թերթ 134բ: